ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 914 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 624-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՎՀՀ՝ 07610657) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 3-ի «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 624-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 09209297) 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/12 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտահագուստի ձեռքբերում՝ 1,488,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01032965) 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/13 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լամինատե հատակների ձեռքբերում՝ 1,775,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Քոմփ Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00224917) 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/14 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է չորս պրոցեսորի, երկու համակարգչային մոնիթորի, հինգ բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի և երկու լազերային տպիչի ձեռքբերում՝ 1,473,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ